ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

09.02.2024թ. **ք.Վանաձոր**

Մասնակցում էին

Գ.Ասրյանը- մարզպետի տեղակալ
Հ.Ավետիսյանը- մարզպետի տեղակալ
Տ.Հովսեփյանը- մարզպետի խորհրդական
Կ.Աշրաֆյանը- մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Մ.Դալլաքյանը, Ռ.Պողոսյանը, Ա.Գրիգորյանը, Մ.Խեչումյանը, Ա.Թումանյանը, Կ.Ադամյանը, Ռ.Մարգարյանը, Է.Հախվերդյանը, Ա.Սահակյանը, Մ.Սարգսյանը, Ա.Բաղդասարյանը
Տ.Խաչատրյանը- մարզպետի օգնական
Է.Կոստանյանը-մարզպետի օգնական

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարների կողմից նախորդ՝ 16.01.2024թ.-ի խորհրդակցությունից հետո կատարված և առաջիկայում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ:
   (զեկ. մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ)
2. Այլ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. **ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Գ.Ասրյանին, Հ.Ավետիսյանին՝**

Ըստ համակարգման ոլորտների անհրաժեշտ վերահսկողություն սահմանել մարզում իրականացվող բոլոր տեսակի ծրագրերի որակով և ժամկետներում իրականացման նկատմամբ (այդ թվում նաև շինարարական ծրագրերի), ինչպես նաև ներկայացնել տեղեկատվություն միջնաժամկետ ծախսային ծրագրերի իրականացման վերաբերյալ:

2. **ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Հ.Ավետիսյանին՝**

2.1 Ամենշաբաթյա կտրվածքով ներկայացնել տեղեկատվություն Լեռնային Ղարաբաղից տեղահանված բնակչության հետ տարվող տարաբնույթ աշխատանքների վերաբերյալ, այդ թվում նաև՝ հասարակական և միջազգային կառույցների կողմից:

2.2 Ամենօրյա հսկողություն սահմանել մարզում իրականացվող շինարարության որակի և կատարման ժամկետների նկատմամբ, կառուցված և շահագործման հանձնված, ինչպես նաև կառուցված և դեռևս շահագործման չհանձնված դպրոցներում և մանկապարտեզներում իրականացնել ստուգայցեր,

2.3 Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել և համագործակցել բոլոր կառույցների հետ՝ Լոռու մարզի զարգացման ավելի արդյունավետ ու ներկայանալի ծրագրերի մշակման և իրագործման նպատակով, մեծ ուշադրություն դարձնել մարզի զբոսաշրջային պոտենցիալի լիարժեք բացահայտմանը:

2.4 Յուրաքանչյուր երկուշաբթի գրավոր տեղեկատվություն ներկայացնել մարզի ճանապարհների վիճակի և շինարարական ծրագրերի ընթացքի մասին:

2.5 Վերահսկողություն սահմանել 2024թ. համար նախատեսված սուբվենցիոն ծրագրերի փաստաթղթային փաթեթների կազմման և ներկայացման նկատմամբ՝ դրանք, առանց թերությունների, ՀՀ ՏԿԵ նախարարություն ուղարկելու նպատակով:

3. **ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանին, մարզպետի**

աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Հ.Մկրտչյանին՝

Համատեղ քննարկել և ներկայացնել առաջարկություններ «Բաստետ Սիստեմս» ՍՊ ընկերությանը տարածք տրամադրելու վերաբերյալ:

09/02/2024

X

ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՂԱԶԱՐՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99